

Անոնք բնականաբար կը փափաքին, որ իրենց զգացումներուն վրայ հիմնուած ենթակայական (Subjective) *սեռական ինքնութիւնը* նաեւ ընդունելի ըլլայ ընկերային հասարակութեան կողմէ: *Անդրսեռականութիւնը* ծանօթ է հնադարեան ժամանակներէն, իսկ 2019 թուականին, *Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան* (World Health Organization=WHO) կողմէ *անդրսեռականութիւնը* կը հեռացուի հոգեկան խանգարումներու կամ հիւանդութիւններու ցանկէն, այսուհանդերձ տարբեր երկիրներու մէջ, այս հարցի առնչուած բոլորովին տարբեր մօտեցումներ կան, թե՛ պետական մակարդակի վրայ եւ թէ ընկերային հասարակութեան մէջ:

• **Միջսեռականութիւն** (Intersexuality).-

Միջսեռականութիւնը ծանօթ երեւոյթ մըն է հնադարեան ժամանակներէն ի վեր: Մինչեւ 20-րդ դարու երկրորդ կիսուն, ան կը նկատուէր, որպէս բնածին հազուագիւտ հիւանդութիւն (կամ սեռական խանգարում) մը, որու պարագային, հենուելով անձի մը ծինաբանական, կազմախօսական ու հորմոնային տուեալներուն վրայ, կարելի չէ յստակօրէն զանազանել անոր արական կամ իգական սեռին պատկանիլը: Վերջին շրջանին, բժշկութիւնը եւ գիտութիւնը խտրականութիւն չյարուցանելու համար, կը խուսափին «խանգարում» կամ «հիւանդութիւն» եզրերէն եւ *Միջսեռականութիւնը* կը ներկայացնեն, որպէս սեռական մէկ տարբերակ: Այս պատճառով, բազմաթիւ երկիրներու անձնագիրներուն (Identity Card) մէջ, որպէս սեռ (Sex) կը նշուի երրորդ տարբերակ մը, արականին ու իգականին կողքին:

Սեռական այս երրորդ կարելիութիւնը կամ տարբերակը ունի իր յատուկ խորհրդանշանը⁽¹⁰⁵⁾ (Symbol), ինչպէս նաեւ գիտական կամ առասպելական այլ անուանումները, ինչպէս.-

- *Ործեւէզութիւն* (Androgyny), որ կազմուած է հայերէն ործ (այր) եւ Էզ (կին) արմատներէն: Յունարէնի մէջ, նոյնպէս՝ ándrós = այր եւ gyné = կին արմատներէն, իսկ անձը կը կոչուի *ործեւէզ* (Androgyn). եւ
 - *Հերմաֆրոդիտականութիւն* (Hermaphroditism), որ կազմուած է հին յունական դիցաբանութեան՝ **Հերմէս**⁽¹⁰⁶⁾ աստուծոյ եւ **Աֆրոդիտէ**⁽¹⁰⁷⁾ աստուածուհիի անուններով, իսկ անձը կը կոչուի *հերմաֆրոդիտ* (Hermaphrodit):
- Միջսեռականութիւնը* (Intersexuality) կը տարբերի *անդրսեռականութենէն*

(105) **Սեռական խորհրդանշաններ** (Sexual Symbols).- Էզ (Female)՝ ♀, արու (Male)՝ ♂ եւ միջսեռական կամ ործեւէզ (Intersex, Androgyn, Hermaphrodit)՝ ♂ :

(106) **Հերմէս** (Hermes) յունական դիցաբանութեան մէջ՝ աստուած ճամբորդներու, ճարտասանութեան ու վաճառականութեան, հնարիչ գրի, սուրհանդակ ու թարգման աստուածներու, որ կը համապատասխանէ հռոմէական դիցաբանութեան՝ *Մերկուրի* (Mercury) եւ հայկական դիցաբանութեան՝ *Տիր* աստուածներուն:

(107) **Աֆրոդիտէ** (Aphrodite) յունական դիցաբանութեան մէջ՝ սիրոյ ու գեղեցկութեան աստուածուհին, որ կը համապատասխանէ հռոմէական դիցաբանութեան՝ *Վեներա* (Venus) եւ հայկական դիցաբանութեան՝ *Աստղիկ* աստուածուհիներուն: